

ԱՏՈՐԱՂԱՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՌՆԻՆԵՐԻ
ՈՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԻ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՐԻՄ

Լեզուներում գոյություն ունեն խոսքի եղանակներ, որոնք հիմնված են տրամաբանական անհրաժեշտության վրա: Կան եղանակներ, որոնք արտահայտության համար այս կամ այն լեզվի մեջ հատուկ բառածներ չկան, կամ, ընդհակառակը, միևնույն եղանակը տվյալ լեզվում կարող է մի քանի բառածներով, կամ այլ միջոցներով արտահայտվել: Վերջապես, միևնույն բառածը կարող է տարբեր նշանակություններ և կիրառություններ ունենալ: Այս երևույթը պայմանավորված է նրանով, որ տրամաբանական և քերականական կատեգորիաները ոչ միշտ են իրար հավասար: Քերականական կատեգորիաները լեզվի պատմության ընթացքում փոփոխությունների են ենթարկվում:

Գրաբարում բայի եղանակները երեքն են՝ սահմանական, հրամայական և ստորադասական: Բայական ձևերը կազմվում են երկու բնից՝ անկատարի կամ ներկայի և կատարյալի, որոնք վրա ավելանում են համապատասխան վերջավորությունները: Գրաբարի երկու ստորադասական ժամանակածները հակադրվում են սահմանականին: Սահմանականը ցույց է տալիս իրական եղելություն, մինչդեռ ստորադասականները ցույց են տալիս եղելության լոկ *հնարավորություն* կամ *ցանկություն*: Նշենք, սակայն, որ սկզբնապես ստորադասականներն իրարից տարբերվել են նշանակությամբ: Այդ տարբերությունը եղել է ըստ կերպի: Անկատարի բնի ստորադասականը (առաջին ապառնին՝ *զնայցեն, գրիցեն*) ցույց է տվել կատարվող, տևական գործողություն, ինչպես որ նույն բնից կազմված սահմանական ներկան և անկատար անցյալը (զնամ=զնում են, զնայի=զնում էի), իսկ կատարյալի բնից կազմված ստորադասականը (երկրորդ ապառնին՝ *զնացից, գրեցից*) եղել է պարզ կերպի, ինչպես որ նույն բնից կազմված անցյալ կատարյալն է (զնացի):

Բայց, ինչպես նշում է Մանուկ Աբեղյանը, հիմնգրորդ դարում արդեն երկու ստորադասականներն իրար հետ շփոթված են ներկայանում և հաճախ միևնույն նշանակությամբ են գործածվում: Մանուկ Աբեղյանը մեր հին լեզվում միտում է նկատում երկու ստորադասականները մի մոր տարբերակման ենթարկելու: Ըստ նրա, անկատար ստորադասականը գործածվում է լոկ *հնարավորություն* ցույց տալու համար, իսկ կատարյալ ստորադասականը՝ *կամք, ցանկություն, դիտավորություն* մի բան անելու: Օրինակ՝ աշխարհաբարի «զնամ,

տեսնեմ», «գնանք, տեսնենք» ըղձականները գրաբարում միայն կատարյալ ստորադասականով են ասվում՝ «գնացից, տեսից», «գնասցուք, տեսցուք»:

Մյուս կողմից հնագույն գրաբարում նկատվում է նաև հետևյալ երևույթը. սահմանականի ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը գործածվում են նաև ստորադասականների փոխարեն: Կիրառության այս փոփոխությունը սկսվում է սահմանական անկատար անցյալի գործածությունից իբրև ըղձական: Սահմանական անկատար անցյալը իբրև ըղձական գործածվում է ցանկություն ցույց տվող մի բառով, օրինակ՝ երանի թե ի դժոխս պահեիր զիս (Յոք. Ժդ. 15)¹: Թող ինքն երթայր և առնոյր զթագաւորութիւնն (Եզնիկ):

Ինչպես այլ լեզուներում, հայերենում ևս սահմանական անկատար անցյալը գործածվում է կարելիական, ինչպես և անիրական նշանակությամբ, նաև պայմանական նախադասություններում: Օրինակ՝ Սա թէ մարգարէ ոք էր, ապա զիտէր (Ղուկ. է. 39):

Սահմանական անկատար անցյալի այս կիրառությունը իբրև ցանկության և կարելիական ըղձական անցնում է նաև սահմանական ներկային: Երբեմն այս նշանակությամբ սահմանական ներկան հանդես է գալիս «թող» բառով: Սահմանականի այս նոր կիրառությունը իբրև ստորադասական, իհարկե, միանգամից չի առաջացել: Ուստի շատ անգամ այս երկու եղանակները դեռ խառն են գործածվում՝ միմյանց փոխարինելով: Օր. Եթէ *ապրեսցի* անօրէնն, ... *տամ* ըմպել մմա (Եղիշէ): Յորժամ առցէ Արշակ կին, ... *անարգի* դուստր նորա (Փ. Բիւզ.): Ոչ ոք լիցի մեր հովիւ ... և ոչ ոք *նստի* յայնմ աթռ (Փ. Բիւզ.):

Գրաբարի եղանակային միևնույն ձևերի բազմիմաստությունը օժանդակել է քերականական նոր ձևերի առաջացմանը և հայերենի բայական ձևերի ու նրանց իմաստների կոնկրետացմանը՝ յուրաքանչյուր բայական ձևով քերականական միայն մի իմաստ արտահայտելու հանգամանքին:

Փափստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում ստորադասական առաջին և երկրորդ ապառնի ժամանակաձևերը հանդես են գալիս ոճական բազմազան կիրառություններով:

1. Ստորադասական առաջին ապառնու կիրառությունները

Ա. Ստորադասական առաջին ապառնին որպես ներկա

Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում ստորադասական առաջին ապառնին դրսևորել է նաև ներկա ժամանակի իմաստ: Այսպես, ստորադասական առաջին ապառնիով գործածված անվանաբայական ստորոգյալները՝ գոյական, ածական, դերանուն + *եմ* օժանդակ բայ կազմությամբ, ժամանակակից հայերենում իրավացիորեն թարգմանվում են որպես սահմանական ներկա: Կան այդպիսի մի շարք օրինակներ: Իսկ *ոչ իցէ*, որ ոչ ցանգանայ մեծութեանն

¹ Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, 308-312 էջեր:

և կամ մարմնոյ առողջութեանն, և կամ կամարարութեանն կարօտիցի, որ միայն միում միածնի Որդւոյն աստուծոյ վայել է (եջ 132)²: (Իսկ ո՞վ է, որ չի ձգտում մեծութեան, մարմնի առողջութեան և կամ կարիք չզգա կամակատարութեան, որ վայել է միայն աստծու միածնին որդուն)³:

Իմաստով ներկա են նաև առաջին ապառնիով խոնարհված միադիմի բայերը՝ առանձին, կամ բաղադրյալ ստորոգյալի կազմում:

Այլ Յոհան եպիսկոպոս, որդի Փառնայ հայրապետի, հինավուրց, թէ *արժան իցէ* զնա *կոչել* եպիսկոպոս (եջ 404): (Այս Յոհան եպիսկոպոսը, եթե կարելի է նրան եպիսկոպոս կոչել, նախկին Փառեն հայրապետի որդին էր):

«Պատմութիւն Հայոց»-ում թերևս կա միայն մեկ նախադասություն, որտեղ միադիմի բայը, խոնարհված լինելով առաջին ապառնի ժամանակաձևով, արտահայտում է անկատար անցյալի իմաստ.

...Ելեալ բնակէր մի ի շինացն՝ ուր և մնա *պատշաճ իցէ կալ* անդ (եջ 150): (...Գնում պարում էր գյուղերից մեկում, որտեղ նրան պատշաճ էր մնալ):

Սա բացատրվում է նրանով, որ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը խոնարհված է անկատար անցյալով: Ուստի և երկրորդական նախադասության միադիմի բայ-ստորոգյալն էլ իմաստով անկատար անցյալ է:

«Պատմութիւն Հայոց»-ում հանդիպում են երկու-երեք օրինակներ, որոնցում առաջին ապառնիով խոնարհված կազմությամբ պարզ ստորոգյալները արտահայտում են ներկա ժամանակի իմաստ:

Ձի մնա այսպէս թուեցաւ՝ եթէ զայն չար ինչ կամացն հեծուկս Ներսիսի *առնիցէ* ի կենդանեաց առ մեռեալս, վասն թշնամութեանն զոր ունէր ընդ մնա (եջ 316): (Նրան այսպես էր թվում, թե այսպես վարվում է Ներսեսի կամքին հակառակ, նրա դեմ տածած իր թշնամության պատճառով):

Բ. Ստորադասական առաջին ապառնին որպես ըղծական

Ստորադասական առաջին ապառնին Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում հաճախ է հանդես գալիս ըղծական ապառնու իմաստով: Այդ բայաձևը, դառնալով երկրորդական նախադասության ստորոգյալ, արտահայտում է պայման այն դեպքում, եթե գլխավոր նախադասության ստորոգյալը որևէ այլ եղանակով է դրված: Հաճախ է պատահում, որ մնան երկրորդական նախադասություններն ունենում են *որ, զի, թէ, եթէ* և այլ շաղկապներ: Եթե երկրորդական նախադասություններում ըղծականի իմաստով բայաձևն արտահայտում է պայման, ապա գլխավոր նախադասության մեջ ըղծականի իմաստով բայաձևը դրսևորում է մի բան անելու մտադրություն, ամխախտ որոշում:

² Բոլոր օրինակներն ըստ Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկի, Երևան, 1987:

³ Աշխարհաբար թարգմանությունները Ստ. Մախասյանցի:

Աստ արևիդ զգազիւ գիրկս. բայց թէ *ժողովել կարիցես*, մեծ զարմանք իցեն (էջ 294): (Դու գազը գրկեցիր, շատ զարմանք կլինի, եթե ժողովես):

Ըղծականի իմաստ արտահայտող ստորադասական առաջին ապառնիով գործածված: Բայածևի հետ կարող են հանդես գալ զանազան եղանակավորող բառեր և այս կամ այն իմաստը հաղորդել բայով արտահայտված գործողություններին: Եթե հիմնական գործողություն արտահայտող բայը դրական ձևով ցանկալի գործողություն էի արտահայտում, ապա գործածվում է *մի՛ գուցէ* կանխման բայը (օր՝ էջ 176):

Խմային վասն ցորենոյն սրբութեան և բոյս աղտեղութեան որոմնն. զի *մի՛ գուցէ* մինչ գորոմնն քաղահան արարեալ խլիցեն, *խլիցի* ընդ նմա և ցորեանն (էջ 176):

Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում հանդիպում են նաև որպես ըղծական ապառնի հանդես եկող ստորադասական առաջին ապառնու ժխտական խոնարհման օրինակներ, որոնցից ներկայացնենք մեկը.

Ձի *մի՛ մեղադիր* ինչ *լիմիցիս*, ընկալ և զպատանեակսդ առաջի զարծակեալսդ զերկոսեան զեղբօրորդիսդ Արշակայ, զԳնելն և զՏիրիթն (էջ 164):

Նշենք, որ *մի՛* արգելականը առաջին ապառնիով բայածների հետ գործածված է 18 անգամ, մինչդեռ երկրորդ ապառնիով բայածների հետ՝ 58 անգամ: *Մի՛* արգելականը դրվել է հատկապես եզակի թվի երկրորդ դեմքով բայածների վրա: Առաջին ապառնին ըղծական անցյալի իմաստով սահմանափակ կիրառություն ունի, ահա թե ինչու Բուզանդի երկում կա նման միայն մեկ օրինակ:

Եւ էր Չոնական այր զգօն, և ոչ ինչ ունէր լեզու յանդիմանութեան կամ խրատու, այլ հաւանեալ էր թագաւորին զինչ և նա *գործիցէ* (էջ 194):

Գ. Ստորադասական առաջին ապառնին որպես պայմանական

Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում ստորադասական առաջին ապառնին գործածվում է նաև պայմանական եղանակի իմաստով, ընդ որում՝ միայն որպես պայմանական ապառնի:

Արդ այնուհետև ընդրութիւն *առնիցէ*. զարդարսն նման ցորենոյ ընդ ինքեան յարքայութիւնն իւր *ընդունիցի*, և զմեղաւորսն որոման նմանեալս՝ յանշէջ ի յաւիտենական ի հուրն *հրամայիցէ* արկանել (էջ 178): (Այն ժամանակ նա ընտրություն կանի. արդարներին ցորենի նման իր հետ արքայություն կտանի, իսկ մեղավորներին որոմի նման կհրամայի ձգել հավիտենական անշէջ կրակը): Ամենից շատ խոսողի կտրական վերաբերմունքն արտահայտվում է պայմանական ապառնու գործառնությով հանդես եկող ստորադասական առաջին ապառնու ժխտական ձևերում:

Ապա թե *ոչ կամիցիս* գնալ, մեռանիս ի ձեռաց իմոց որպէս և Մուշեղն մեռաւ (եջ 368): (Իսկ եթե չես կամենա գնալ, իմ ձեռքից կմեռնես, ինչպես Մուշեղը մեռաւ): Այստեղ գլխավոր նախադասության բայը դրված է ներկա ժամանակով, մինչդեռ իմաստով պայմանական ապառնի է: Այս բայաձևի (*մեռանիս*) պայմանական ապառնի իմաստը պայմանավորված է երկրորդական նախադասության բայ-ստորոգյալի իմաստով:

Դ. Ստորադասական առաջին ապառնին որպէս հարկադրական

Բուզանդի «Պատմութիւն Յայոց» երկում կան սակավաթիվ նախադասություններ, որոնցում ստորադասական առաջին ապառնիով խոնարհված բայ-ստորոգյալներն արտահայտում են հարկադրական եղանակի ապառնու իմաստ: Յարկադրական անցյալի իմաստով հանդես եկած առաջին ապառնիով բայաձևեր «Պատմութիւն Յայոց»-ում չկան:

Իբրև ոչ եթե զամուսնութիւնն ինչ աղտեղի համարէր, այլ կասկածէր նա ի տեսլենէն՝ զոր ետես, եթե ընդէր բնաւ ի նմանէ այնպիսի զաւակ անպիտան *ծնանիցի* (եջ 22): Եւ այսպիսի անգեալ էր ի խորհուրդս, թե զինչ այն ինչ իցէ զոր *տայցեմ* ես նմա (եջ 206): (Եվ ընկել էր մտածմունքի մեջ, թե արդյոք ինչ բան պետք է նրան տամ):

«Պատմութիւն Յայոց» երկի մեջ միայն մեկ նախադասություն կա, որում առաջին ապառնու ժխտական խոնարհումը համապատասխանում է հարկադրական ապառնու ժխտականին:

Եւ զի *մի՛* զմահ մարդկանն առանց դարծի միւսանգամ կենդանանալոյ *համարիցին*, և անյուսութեամբ ի վերայ գնացելոցն օճիրս *գործիցեն* լալեալ կոծոյն, զանառակութիւնս աշխարհին դնելոյ (եջ 120): (Եվ չպետք է կարծեն, թե մարդու մահն անդառնալի է, նորից կենդանանալու հույս չկա, ուստի և չպետք է մեռածի վրա անհուսությամբ լաց ու կոծ անեն, անչափ ու անկարգ սուգ անեն):

Բուզանդի «Պատմութիւն Յայոց» երկում առկա է ստորադասական առաջին ապառնիով բայաձևերի 173 կիրառություն:

II. Ստորադասական երկրորդ ապառնու կիրառությունները

Ստորադասական երկրորդ ապառնիով գործածված բայաձևերը Բուզանդի «Պատմութիւն Յայոց» երկում մոտ չորս անգամ ավելի շատ են, քան առաջին ապառնիով գործածվածները: Դրանց թիվը 649 է: Այդ բայաձևերը հիմնականում արտահայտում են ըղձական և պայմանական, ավելի քիչ՝ հարկադրական եղանակների ժամանակաձևերի իմաստները:

Ա. Ստորադասական երկրորդ ապառնին որպէս ըղձական

Բուզանդի «Պատմութիւն Յայոց» երկում ստորադասական երկրորդ ապառնին արտահայտում է ըղձական եղանակի միայն ապառնու ժամանակային իմաստը: Ըղձական անցյալի իմաստով կիրառություններ չկան:

Աղքատքն բայց եթէ ի մոյր *ելցեն*. այլ անդր ոք ինչ *մի' իշխեսցէ տանել*, եթէ ոչ նոքա *եկեսցեն ժոռեսցեն աղաչեսցեն*, ապա թէ *գտանել* հազիւ ինչ *կարասցեն* (էջ 348): (Աղքատները թող դուրս գան մուրան, ոչ ոք չհամարձակվի այնտեղ նրանց որևէ բան տանել, թող նրանք շրջեն, խնդրեն, աղաչեն, ապա թե մի ողորմություն ստանան):

«Պատմութիւն Հայոց» երկում կան նաև երկրորդ ապառնու բայաձևեր, որոնք ոչ միայն ըղծական ապառնու իմաստ են արտահայտում, այլև համոզես են գալիս եղանակավորող բառերի հետ միասին, որոնք այս կամ այն իմաստային երանգն են հաղորդում բայաձևին: Հնգետասան օր յետ բանիցն եղելոյ երկարեաց Քրիստոս, *թերևս դարձցիք* (էջ 138): (Իմ խոսածներից հետո Քրիստոս տասնհինգ օր հետաձգեց (մահը), գուցե դառնաք):

Ստորադասական երկրորդ ապառնու հոգնակի առաջին դեմքով բայաձևը որպես ըղծականի ապառնի գործածվելիս իմաստով մոտենում է հրամայականին: Այս դեպքում բայաձևն ունենում է հրամայական հնչերանգ, իսկ խոսքը կարող է վերաբերել ինչպես մեկ անձնավորության (բարեկամական դիմում եզակի խոսակցին, հեղինակային հոգնակի), այնպես էլ հենց հոգնակի առաջին դեմքին: Հրամայականի իմաստն ավելի է ընդգծվում, երբ գործածվում է հրամայական բայաձևի հետ միասին: Այլ եկա՛յք, զանձինս անծամքք *մխիթարեսցուք*. անձանց և աշխարհի *պահ կալցուք*, և տեսոն բնակի *վրեժ խնդրեսցուք* (էջ 86): (Եկեք մենք մեզ մխիթարենք, մեր գլուխներն ու աշխարհը պահպանենք և մեր բնիկ տիրոջ համար վրեժխնդիր լինենք):

Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում բավական մեծ թիվ են կազմում երկրորդ ապառնու ժխտական խոնարհման այն բայաձևերը, որոնք համապատասխանում են ըղծական ապառնու ժխտական ձևերին:

Քանզի տուաւ նոցա ոգի մոլորութեան, աչս՝ զի *մի' տեսցեն* և ականջս՝ զի *մի' լուիցեն*, և սիրտ՝ զի *մի' իմասցին դառնալ* յապաշխարութիւն (էջ 52):

Այլ թէ ոչ *աճապարեսցես*, արքայ, այժմ զհայ երկիրս խորիի լնուլ քաղաքօք, և զօրանիստ առնէ աստ բնակութեան զօրացն Յունաց (էջ 360):

Բ. Ստորադասական երկրորդ ապառնին որպես պայմանական

Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում ստորադասական երկրորդ ապառնին գործածվում է պայմանական եղանակի ապառնի ժամանակաձևի իմաստով: Արդ վասն այսչափ ստորութեանց ձերոց և պղծութեանց, *բարձցե* տէր զթագաւորութիւնդ ձեր ի ձեմք. *բարձցէ* և զքահանայութիւնդ ի ձեմք (էջ 86): (Արդ՝ ձեր այսքան ստորությունների ու պղծությունների պատճառով տեղը ձեր թագավորությունը կվերացնի, ձեր քահանայությունը կվերացնի):

Նշենք, որ ստորադասական երկրորդ ապառնու եզակի երկրորդ դեմքով բայաձևը որպես պայմանական ապառնի գործածվելիս իմաստով մոտենում է հրամայականին: Բայաձևն ունենում է հրամայական հնչերանգ և

ժամանակակից հայերենում կարող է թարգմանվել հրամայական եղանակի բայաձևով: Վայրիկ մի ևս սակաւիկ մի ևս *կալցիս ժոյժ*, և ահա հասեալ է օգնականութիւն (էջ 264): (Մի քիչ էլ, մի փոքր ժամանակ էլ համբերի՛ր, օգնությունը հասել է): «Պատմութիւն Հայոց» երկում առկա են երկրորդ ապառնու ժխտական բայաձևեր, որոնք համապատասխանում են պայմանական ապառնու ժխտական ձևերին:

Եւ եդ ուխտ, զի այլ ոչ ևս երբէք *անցցէ* զբանիւք մորա (էջ 178): (Եվ ուխտեց, որ այնուհետև նրա խոսքից երբեք դուրս չի գա):

Գ. Ստորադասական երկրորդ ապառնին որպես հարկադրական

«Պատմութիւն Հայոց» երկում երկրորդ ապառնու շատ քիչ բայաձևեր կան, որոնք արտահայտում են հարկադրական եղանակի իմաստ, այն էլ՝ միայն ապառնի ժամանակաձևի իմաստ: Այս բայաձևերի մեծ մասը խոնարհված է հաստատական, մեկ-երկուսը՝ ժխտական խոնարհմամբ: Կայսրն մեռաւ, արդ մեք առ ո՞՞ երթիցուք (էջ 162): (Կայսրը մեռավ, էլ ու՞մ մոտ պիտի գնանք): *Մի՛* ինչ *լիցի* դոցա վնաս ի մէնջ (էջ 318): (Մեր կողմից նրանց վնաս չպիտի հասնի):

Դ. Ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնիներ

կիրառությունները

Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկի մեջ կան ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնու մի քանի կիրառություններ՝ կազմված անցյալ դերբայով և *եմ* օժանդակ բայի առաջին ապառնիով: Այս ձևերը իմաստով համապատասխանում են ժամանակակից հայերենի վաղակատար ներկա ժամանակաձևին, մեկ դեպքում՝ հարկադրական եղանակի երկրորդական բաղադրյալ ապառնուն՝ կազմված հարակատար դերբայով և *լինել* բայով:

Եւ քարկոծ առնէին զնա քարամբք իբրև զայր, որ աշխարհի և զնդի և զօրաց տեառն իւրոյ *դաւաճան լեալ իցէ* (էջ 34): (Նրան քարերով քարկոծեցին իբրև մի մարդու, որ դավաճանել է իր աշխարհին և իր տիրոջ գնդին ու զորքերին):

Այն ուշ առնէր, և խնդալից եղեալ՝ ասէր պարծելով առաջի իւրոց զօրացն, թէ վաղիւ յայս ժամ իմ կալեալ կապեալ ընկեցեալ զՍմանուէլն, և յանդիման նմին զկին մորա Վարդանոյշ *խայտառակեալ իցէ* (էջ 382):

Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում առկա են նաև ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնու մի քանի գործածություններ՝ կազմված անցյալ դերբայով և *լինիմ* բայի երկրորդ ապառնիով: Այս կազմություններն արտահայտում են սահմանական ներկայի իմաստը. Զի իմ առ բարերարութեան իմոյ, *արծակեալ լիցի* զքեզ (էջ 320): (Ես իմ բարերարությամբ քեզ արծակում եմ):

Ե. Ստորադասական առաջին և երկրորդ ապառնիների համատեղ
կիրառությունները

Ինչպես արդեն նշել ենք, ստորադասական առաջին և երկրորդ ապառնիները սկզբնապես իրարից տարբերվել են ըստ գործողության կատարման կերպի: Սակայն արդեն V դարում երկու ստորադասականները հաճախ միևնույն նշանակությամբ են ներկայանում, և կերպային-իմաստային տարբերություն չի նկատվում: Այսպես էլ Բուզանդի երկում ստորադասական երկու ապառնիները համատեղ կիրառվում են և հաճախ փոխարինում միմյանց:

Ապա հետ այսորիկ առաքեցին Ջարմանդուխտ տիկինն Չայոց և սպարապետն Սանուէլ զԳարջոյլ Մաղխագ, և ընդ նմա զբազումս ի նախարարացն Չայոց, հրովարտակօք ընծաիւք և պատարագօք առ թագաւորն Պարսից, զի ի նա ձեռս տայցեն և զնա պաշտիցեն, և նմա միամտութեամբ ծառայեսցեն, և տայցեն նմա զաշխարհս Չայոց (էջ 372): (Սրանից հետո Ջարմանդուխտ տիկինը և Սանուէլ սպարապետը Պարսից թագավորի մոտ ուղարկեցին Գարջոյլ Մաղխագին ուրիշ շատ հայ նախարարների հետ, հրովարտակներով, ընծաներով ու նվերներով, (խոստանալով) նրան ձեռք մեկնել, նրան հպատակվել և հավատարմությամբ նրան ծառայել և Չայոց աշխարհը նրան տալ): Այսպիսով, ստորադասական եղանակի առաջին և երկրորդ ապառնի ժամանակաձևերը Փալստոս Բուզանդի « Պատմութիւն Չայոց » -ում հանդես են եկել ոչ միայն ըղծական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակաձևերի իմաստներով, այլև սահմանական և հրամայական եղանակների ժամանակաձևերի այլևայլ իմաստներով, ոճական բազմազան կիրառություններով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Աբեղյան, *Չայոց լեզվի տեսություն*, Երևան, 1965:
2. Դ. Ավետիսյան, *Գրաբարի ստորադասական եղանակների ըմբռնումը հայ քերականության մեջ*, Բանբեր ԵՊՀ-ի, 1984, No 1:
3. Փալստոս Բուզանդ, *Պատմութիւն Չայոց*, Երևան, 1987:
4. Ռ. Ղազարյան, *Գրաբարի բառարան*, I, II հատորներ, Երևան, 2000:
5. Ռ. Ղազարյան, Ս. Մալեք-Մուսահամադի, *Բայի անդեն և դիմավոր ձևերի գործածությունը Եզնիկ Կողբացու "Եղծ աղանդոց" երկում*, «Բանբեր համալս.», 2003, հ. 2:
6. *Նոր բառգիրք Չայկազեան լեզուի*, Երևան, 1979:
7. Պ. Պողոսյան, *Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում*, Երևան, 1959: